Ծուշանիկ Կուրղինյան

Դերձակուհին

Նա հրաժարված կյանքից, երազից,
Կարում է անխոնջ գիշեր ու ցերեկ .
Նրա կուրծքը նեղ, թխկում է հազից,
Տոնական հույզով չէ հրճվել երբեք . . .

Սապատ է բուսել ջահել թիկունքին,
Մարմինն է վտիտ, դեմքը՝ վաղ խամրած .
Անգութ հարվածի սպի կա ունքին,
Կապույտ աչերի նուրբ ցոլքը մարած . . .

Երկու փոքրիկի նա քուն է դրել,
Երրորդին զգույշ օրորում ոտքով .
Ծախված գիշերից չորրորդն է կերտվել,
Որ կրում է դեռ իր վատուժ կրծքով . . .

Տեսա, թքի մեջ արյան բծեր կան,
Հազն էլ շեշտ ունի գիշերվա կեսին .
Վաղը նա, անշուշտ, կիջնի գերեզման,
Պերճ տառապանքի խաչը իր ուսին . . .

Իսկ քաղցած, բոկոտ որդիքը նրա
Պիտ փտեն հանքում անհաց ապրուստով .
Աղջիկներն անտեր՝ մայթերի վրա

Կը ծախվեն աժան ներկ ու հագուստով . . .

1908 թ. 9 մայիսի